

մի՛ իշխեցէ և զորրորդն ապաշխարեսցէ և երրորդքն մեկնեցին և ապաշխարեսցեն»:

Բայց երբ որ այս կանոնը ժամանակի ընթացքում աչքաթող արին, Աիոն կաթուղիկոսը ստիպուեց վերստին նորովել այդ հրամանն, ըստ որում և Պարտաւի ժողովի (768?) որոշմանց մէջ կանոնագրումէ.

«Յառաջն առաջին սուրբ հարքն յիւրեանց ժամանակս արգելին զազատս և զանազատս յարեան մերձաւորութենէ. այժմ առ մեօք լուծեալ տեսամնեմք՝ մանաւանդ ազատաց՝ զկանովին ս. հարցն, զի անխօտիր խառնին ընդ իւրեանց մերձաւորսն անկարգ ամուսնութեամբ զուգեալ. յայսմ հետէ ցըրրորդ զարմ մի՛ իշխեցին ամուսնութեամբ զուգիլ, ապա թէ ոչ՝ նզովեցին ի մէնջ և ինքեանք տացեն պատասխանի Աստուծոյ ի մեծութեան նորա դատաստանի»:

Այսպիսով Հայաստանեալց Եկեղեցու հիմնական կանոնը հրամայուումէ հինգ դար շարունակ և յետոյ: Մեզ մնումէ այժմ պարզել թէ ինչէ այդ «մինչև ի չորրորդ ծնունդ» խօսքերի իմաստը:

(Կը շարունակուի):

Ա. ՏԵՇ ՄԻՔԵԼԵՎԵՆԻ



առաջինն էլ բաւական կլինի և ոչ դասական թուով նրկորդ՝ եթէ հինգերորդը արգելուած լինի՝ միմիայն չորրորդը չի կարող ընդ ապաշխարեանօք լինել. Երրորդ՝ չորրորդի և երրորդի կանոնազանցութեան դէմ կարգադրութիւն է անում ինչպէս կարող էր հինգերորդի համար ոչինչ չասել՝ թէ արգելուած էր. Սխալը յառաջացել է «. . . տառի առանձին կարգալուց և ըստ երկոյթին շատ հին է. Խսկ եթէ ուղիղ համարենք «զինգերորդն», այն ժամանակ այդ պէտք է բացատրուի թէ հինգերորդը գուարութեամբ թոյլատրել՝ որպէս զի կանոնազանցութիւնը գիւրաւ չկատարուի:

Սակայն ես հետեւում եմ տրամաբանական իմաստին և մանաւանդ մի մագաղաթեայ հին օրինակի ընթերցուածքին. այս օրինակը գեղեցիկ ընթերցուածքներ շատ ունի: Ումանք էլ ունին «ցհինգերորդն մի իշխեցէ», այսինքն որ հինգերորդը կարող են պսակուիլ, այս ևս կարելի է ուղիղ հտմարել:

ՊԱՏՄԱԿԱՆ

ԹՐԴԻՒԵԼՈՒԹԻ

Ա.



յրարատնահանգի հարաւային գաւառաց մին է բազրեանդ, որ բռնած է Արածանին և կամ Մուրաղը կազմող երկու ծիւղերու, Շեռեան ու Մուրատ գետոց հովտի ամբողջ

տարածութիւնը և կամ այսօր Ցիատին (Ցահապիվան), Գարաքիլիսայ և Ալաշկերտ Վաղարշակերտ) կոչուած վայրերն, որք ի հիւսիսոյ շրջապատուած են Զրարաշն լեռանց և ի հարաւոյ Ոլիճ-կետուկ Ծրի-կիրճ և Աւտաղ (Ճաղկանց) լեռանց շղթայով. նաև Ուռկաւէտ (Քոսատաղ) և Նպատ լեռանց միջավայրը՝ որոց առաջինը կը գտնուի Բաղրեանդայ արևմտեան կողմն, երկրորդն արևելեան ։

Բնական զիրքով երկու գեղեցիկ դաշտագետիններու բաժանուած է բազրեանդ, արևելեան և արևմտեան, զորս կը բաժանեն Աինակ

1. Ըստ պատմութեան Արածանին կը կարծուի Ծեռեանի և Մուրատի միացմամբ ի հարաւ ուղղուած Մուրատ (Եփրատ) գետն, որ կսկսի Բագրեանդայ արևմտեան դաշտի կեդրունը գտնուած Գարաքիլիսայ զիւղաքաղաքից ՚/, ժամ ի հարաւ կերկարի ի Մանազկերտ, Ապահունիս և ի Մուշելն, ոմանք կասեն թէ Արածանին առանձին ջուր է, որ Բիւրակնեան լեռնէն կիջնայ: Կանցնի Խոնուի և Ապահունեաց միջէն, Եփրատի կը խառնուի. Կը նուսայ մէջ Բինկօլի ջուր կասուի, խսկ Ապահունեաց մէջ Զեռնակայ ջուր:

2. Մուրատ այն ջուրն է, որ Շաղկանց լեռներէն կիջնայ. Ծեռեանի հետ խառնուելով մեծ Մուրատը կամ Եփրատը կը կազմէ:

3. Այս լեռներն Բագրեանդայ սահմաններէն
1—2 ժամ ներս են:

և ծաղկանց լեռներէ Առուրատի աջ և ձախ ափը իջած, ընդհատած ձիւղերն:

Արևելեան գաշտագետինը, որ պատմութեան մէջ Զիրաւ ասուած է, կը տարածուի Նպատայ հիւսիս և արևելեան հիւսիսն նաև յարեւելս, մինչև Տիրատինայ արքելեան կողմն գտնուած Խփեկայ կէտուկն:

Այս գաշտագետնոյն միջավայրէն կը հոսի Առուրատ յարեմուտս կոյս, այսուեզ է հըռչակաւոր Ա. Յովհաննու վանք (Խւճքիլիսայ), որ Նպատ լերան հիւսիսային ոտքն Եփրատի ձախ ափին վերայ կառուցուած է, այս վանքէն կը տեսնուի Նպատայ գագաթը՝ Մեծն Սերսէսի աղօթագայրը կառուցուած մատուռն։ և լն։ և լն։ Այս գաշտին մէջ է Տիրատին գիւղաքաղաքն, որոյ հարաւն է Տիրատինայ հարիւրաւոր Ծերմուկներն, ուր Եփրատի վերայ հաստատուած է կրային ջրէ կազմուած կամուրջն։

Երկրորդ՝ մեծ գաշտագետինն արևեմտեանն է, որ տարածուած է Սուկաւէտի արևելեան հարաւը մինչև Զիրօ հայ գիւղն։

Բազրեանդայ արևեմտեան մասն որ Ալաշկերտ ևս կը յորջորջուի. բռնած է մեծաւ մասամբ Շեռեան գետոյն ձախ հովիտը, ուր կան մերձ Սուկաւէտի Թօփրաք-զալէ (Վաղարշակերտ) և մերձ Արածանւոյ Գալրաքիլիսայ գիւղաքաղաքներն, որոց առաջինը յարեւելս Սուկաւէտի Շահկոլ լերանց հարաւային ստորոտը. շինուած է, ուր դեռ կերեքն Վաղարշի շինած բերդի բեկորներն, իսկ Գալրաքիլիսան, որ Վաղարշակերտից 4 ժամ՝ արեւելեան հարաւ, գրեթէ գաշտի կեղրօնի նաև Խրանայ ճանապարհի վերան, Դաշի և Քօր գետակաց ի մուրատ խառնուրդի միջավայրն գեղեցիկ դիրք մի բռնած է, երեք կողմից մեծ մեծ ջրերով պատած և տակաւ առ տակաւ քաղաք գառնալու վերայ լեներուն համար։

1. Այս մատուռի վայրը կանգնած՝ բազկատարած յարեւելս դարձած, Նպատայ ստորոտը՝ Զիրաւայ գաշտի մէջ կուռղ հոյշկական բանակի յաջողութեան համար աղօթած է Մեծն ներսէս, այս մատուռէն հարաւ քանի քայլ խօնարհ կալ Սրբոյն ճգնարանը, ուր ևս ուիսա կը գնան։

Երկու գաշտագետիններն, որպէս ասացինք, կը բաժանուեին այն վայրը ուր կայ Դաշիլ-շայ պարսկաբնակ մեծ գիւղն, որ է խճղւոյն վերայ և Առուրատի աջ եղբրւ։

Բազրեանդայ արևեմտեան բաժանման գաշտային մասն Զետրկան գիւղէն գետի յարեւելսու մինչև Դաշիլ-շայ 11—12 ժամու ճանապարհ է, ձիով, իսկ լայնութիւնը 2—3 ժամ։

Այս երկու գաշտագետիններէ արևելեանն է բուն Բազրեանդայ գաշտագետինն, որպէս ասացի, ուր է Զիրաւայ պատմական գաշտը, որ կըսկսի Դաշիլ-շայից, կերկարի յարեւելս 6—7 ժամ մինչև Խփեկայ կրմի մօտերն։

Ամբողջ Բազրեանդ միանգամեն առնելով ձուաձեւ գիրք ունի, երկարութիւնը ուղղուած է ընդ մէջ արևելլից և յարեւելեան հարաւոյ, 20—25 ժամ՝ երկարութիւնն, որ մի ակընթարթով Ալաշկերտի արևեմտեան բարձուակը զտնուած Խալեազ և Եռնագաշտից կարող ես տեսնել. իսկ բաժանումներն ևս նոյն ուղղութեամբ ձգուած են։

ԼԵՌՆԱԾՎՈՅՑ

Զրաբաշխ լեռներու շղթայն զԲազրեանդ հիւսիսից կորածեւ պատած նաև Ալիճկետուկ և Ալատաղ ի հարաւոյ նոյնպէս պատած լինելուն՝ գաշտն ձուաձեւ կերպարանք առած է, ասացի, որ ձուի հաստ կողմն կարող ենք համարել գաշտի արևեմտեանն և սուրբն արևելեանըն, սակայն երկու գետերու միացմանը կազմուած Արածանին արևեմտեան դաշտի հա-

1. Ծաղկանց լեռներու մի շղթայն է, որ խոնարհելով բազրեանդայ յարեւելլից ի հիւսիս. կը խառնուի հիւսիսային շղթային. որ գէպի աճ (յարեւելս) Մասիս իսկ գէպի ձախ (յարեմուտս) ի Սինակ և Զիրաբաշխ կերկարի։

2. Խալեաղ Սուկաւէտից յարեմուտս բարձր դիրք ունի, քսանի մօտ քրդաբնակ գիւղերով լեռնագաշտ մէ, ուստի յարեւելս աչքիդ առջև կը պարզուի ամբողջ Բազրեանդ շրջապատող լեռներն ու լեռնաշղթայներն, որոց միջավայրն, ի խոնարհ, երկու գաշտագետիններն, իսկ երբ յարեմուտս դառնաս, Բասեան՝ որ հարաւից պատած են Բիւրակնեան լերինք, հիւսիսից Խորոսանայ և լն. և առջեղ Բասեանի գաշտն, որոյ վերայից դիմացդ կը պարզուին Կարսոյ բարձրաբերձ լերինք։

բաւային լեռնաշղթայն ցյատակ ձեղքերով ուղղուած է ի Մանազկերտ, բաժանելով յաջ դիմք կետուի և Անդամի լեռներն իսկ ի ձախ ծաղկանց լեռներն որով Բաղրեանդ ծով լինելէ դադրած է:

Բագրեանդայ ^{1/10-} հազիւ դաշտային լինելով՝ մնացածն լեռներէ, լեռնահովիսներէ կը կազմուիր որք ևս իւրեանց զագաթան վերայ տեղ տեղ ունին մեծամեծ տարածութեամբ լեռնադաշտեր, որոց իւրաքանչիւրին մէջ զետեղուած կան 10—20—30 քրդաբընակ գիւղեր, որք գիւղախմբապետութիւն (գրալավայ) կը կազմեն, որք միայն արևմտեան դաշտի շուրջն 25-ի չափ կան, որոց վերայ մանրամասն խօսելու եմ ի սատրե:

Հիւսիսային լեռնաշղթայն անընդհատ պատած է ամբողջ Բագրեանդայ հիւսիսն ուստի շարունակուելով կը հասնի Մասիս:

Մենք այժմ կը գտնուինք Բագրեանդայ արևմտեան կողմ եղած Խալեազի արևմտեան բարձանց վերայ. Եազմիգաշ (սեպագրութիւն) ժայռից մի ժամ յարելելս, մեր երեսն ուղղած լինինք յարելելս, մեր աջ ու ձախ կողմերէ կերկարին յարելելս լեռնաշղթաներ, որք նախ Խալեազ լեռնադաշտի շուրջն (հիւսիս և հարաւ) կը պատեն, ապա դաշտի:

Մեզնից ^{3/4} ժամ հեռախ, մեր ձախ կողմը դահար դիւղի անմիջապէս հիւսիսային բարձունքը կայ դրամ լեռն, Մոյն անուամբ 3—3 ^{1/2} ժամ կերկարի ցկորիս և Սուկաւէտի հիւսիսային բարձունքից 3 ^{1/2}—4 ի Շահկոլ ¹ լեռ, որոյ դագաթից մի առատ աղբիւր կը բղիի, ճանալով կը հոսի: Աստի շրջայն կերկարի Մանակներ, Զիշեքլու (ծաղկանոց), Կոռէ, Բօղժեկի, Աշան օղի, Աղբուլախ (ապիտակ աղբիւր), Զամէ, Մերկեղեր (դեղին մարգեր), Ախտայ, Թանտուրակ և Ահեկ, որք իրարմէ 1—2 ժամ հեռաւորութեան

^{1.} Շղթայի հարաւային երեսին վերայ է Շահկոլ լեռն, ուստի առատ չուր կը բղիի, աստի նախնիք ագութայներով ջուր տարած են Աաղարշակերտ, որ կը գտնուի 2—2 ^{1/2}, ժամ արևելեան հարաւային ստորոտը.

վերայ այս անուամբ բարձրացած են: Ջրաբաշին շղթային վերայ իւրեանց զլուխներն ցցած և սոքա արևմտեան դոշափի հիւսիսային կողմն կիսաբոլորակ կը պատեն:

Մինչեւ Աշան օղի շղթայն յարելելս ուղղուած էր յորմէ յետոյ մինչեւ Աինակ տակաւ առ տակաւ արեւելեան հարաւ գարձած, այնպէս որ Աինակ ընկած է արեւմտեան դաշտի (Ալաշկերտի) ուղղակի արեւելեան կողմն:

Աինակ և Գանափիլի զեռան (ոսկեա լեռ) լեռան շարունակութիւնը կերկարի, Ղաղ Զիարէթ. Կոլկէնի ¹), դեպի յարելելս ձգուած են. Զիրաւայ դաշտի հիւսիսն բռնած:

Մեր ձախ կողմից երկարացած շղթայի վերան գանուած լեռներն, որք իրար շղթայուած էին և որք Բագրեանդայ հիւսիսն պատած, ամբողջապէս մեր տեսութեան ներև են: այժմ դաշտնամք մեր աջ կողմի լեռնաշղթային, որ Բագրեանդայ հարաւէն պիտի անցնի:

Մեր աջ կողմն՝ Շեռեան կամ խալեազ գետոյն նաև աջ կողմն կը բարձրանայ մի հոսկայ լեռ Մեարգամիր (թագաւորական մարգեր) անուամբ, որ գագաթը ունի ընդգարձակ տափարակ ուր կը զետեղուին 1000-ից աւելի վրանաբնակ քրդեր ամրան մէջ, այս լեռն իւրակնեան լեռան յարելելս արձակած շղթայի վերայ բարձրացած է, աստի ևս ուղղակի յարելելս երկարելով մինչեւ Կելին (հարս) և Մզրախ (սիզակ) կը պատէ Խալեազի, ըստ հայր Ալիշանի ծուարածատափի ²) հարաւն, ուստի շարունակելով կանցնի Ալաշկերտի դաշտի հարաւաւէն. դեպի իրձօ Ղիմկետուկ և

^{1.} Այս շղթայն բռն Բագրեանդայ, այսինքն արեւելեան դաշտին պատկանելուն՝ առանձին հատորով պիտի խօսիմ սորա վերայ, որոյ համար մանրամասն չեմ նարկայացներ այս տեղ.

^{2.} Ըստ իմ կարծեաց Տուարածատափ այժմեան Անգամի գաւառակն է, որ Ալաշկերտի միջակի հարաւն և Մանազկերտի հիւսիսն կընկնի, այս կարեոր գաւառակին վերայ ցարդ ու և է գրուած տեսնուած չէ: Տեղագրականին յաւելուածին մէջ եթէ ոչ մանրամասն՝ գոնէ հարեւանցի ակնարկ մի պիտի ձգեմ հանդերձ մի քանի հետաքրքրական աւանդութիւններով. Անդապի 140 քուրդ գիւղ ունի:

Կեառէ (խուլ) ձգուելով կընդհատի Արածանւոյ սկսած վայրը (աջ ափին վերայ):

Հանդէպ Կեառէ լերան՝ Արածանւոյ ձախ ափին ի վեր կը բարձրանան ծաղկանց հսկայական, ընդարձակ և բարձր լերինը¹⁾ որք ի հարաւոյ կը պատեն արեմուեան դաշտի կէսն, բուն թագրեանդը և Գոգովիդը, կը ձգուին մինչև Մակու և Խոյ:

Այս շղթայն ևս կը պարապէ զբագրեանդ հարաւային կողմէն: Մէարգամիրի շղթայն կը բաժանէ, Խալեազը Խնուսից, Բրձոյի, և Պյիճիէտուի ի շղթայն՝ Ալաշկերտի դաշտն Անդափից: Կահ ծաղկանց լեռներն կը բաժանեն Մանագիերտն Խամուրից²⁾ և Գարաքիլիսայից, Արձէն Խւչքելիսայից, Վան Տիատինից:

ՆՇՈՒՆՈՒՐ ԼՅՈՒՆՔ.

Որչափ որ երկու գաշտագետիններու շուրջն շղթայք լեռնանման խոյացած են դաշտի վերան, սակայն տեղ տեղ կը տեսնուին շղթայի ծայրէն վեր բարձրացած գագաթներ, մեծու փոքր սարեր, որք անուն ունին և սար կասուին, տեղ տեղ նաև շղթայն քիչ կամ շատ խոնարհած է. ուստի մարդոց երթեւեկութիւնը կը լինի, սա ևս կէտուկ (կիրճ) անուն կը կրէ:

Ծաղկանց լեռներն, որք Ալաշկերտի դաշտի արեւելան հարաւ կընկնին, նաև Արուրատի սկսած վայրէն ցիսառնուրդ Շեռեանայ եղած ընթացքին հարաւն կամ ձախ ափն ի վեր բարձրացած են:

Կապատ. — Ծաղկանց լեռներու ի հիւսիս

1. Ա.յս լերանց հօվիտներու մէջ 10.000 տուն շատ դարձի քրդեր կը լնակին, որք անասունք կը բուծանեն և ուրիշ երկրի քրդերու հետ բազգատելով լաւ պիճակ ունին:

2. Խամուր մօտ 100 գիւղ քուրդ ժաղովուրդ ունի, դարուս սկիզբներն ամրողջովին հայ էին, այսօր բուլորովին քուրդ ընակիչներ հաստատուած են. Մուրատ ի հիւսիսայ, Երածանի յ բեմուից պատած են զամուր, նաև արեւելան և հարաւային կողմէ պատած են Ծաղկանց լեռներու շղթայք, որով այս վայրը Ծաղկանց լեռներու արեւմտեան հիւսիսային երեսի ստորոտն կընկնի: որով կարող ենք ասել թէ Ծաղկոտն գաւառն է:

Խոնարհած թեր և Մուրատի ձախ ափի վերայ ընդհատած վայրն բարձրացած է մի փոքր լեռ — Նպատ, սորա հիւսիսային սաորուտն զող մի կազմուած է. ուր կառուցուած է այն մեծ և պատմական վանքն, որ Ա. Լուսաւորիչ շինած է և Հերակլ՝ կայսեր հրամանով նորոգուած և ուր հայոց հեթանոսական մեծ տօներն կը կատարուէին:

Կապատ Պաշլի չայի և Տիատինի միջավայրը երկուքից ևս Յ-ական ժամը հեռու կը գտնուի:

Սուկաւէտ. — Հանդէպ Նպատայ՝ յարեմուտը հիւսիս, Ալաշկերտի դաշտի արեւմտեան հիւսիսային եղրից քիչ բարձր, Մոլլա-Սիւլէյման գիւղի մօտն Զաթայ և Պօփուզայ ջրի միջավայրն. Զրաբաշխ լեռներու շարքին ուղանդնած են մեծ և փոքր Սուկաւէտներն:

Փոքր Սուկաւէտ մեծին հարաւն է, կարճ շղթայով մի իրար միացած են: Փոքրի ի հարաւ յարեւելս հակեալ լանջի վերայ, մերձ ստորոտին, կայ Ա. Սուքիասանց սրբավայրն²⁾, այս սրբավայրից բարձր երկու լերինքս ևս զուրկ են բուսականութիւնից. միայն մեծ Սուկաւէտի արեւմտեան հարաւային երեսին վերայ Ջերըկան գիւղից կը տեսնուի մի ձորակ, որոյ երկու կողերն պարզ կերեին փոքրիկ անտառակներ, որք անմատչելի են:

Մէարգամիր կամ Մէրկեմիրն Խալեազի հարաւ արեւմուտքն գտնուած մեծ լեռն է, որ կայ Խնուսայ ի հիւսիս արեւելան սահմանի վերայ, բարձր, գագաթը տափարակ և խոտաւէտնաև ջրաւէտ, ուր կը զետեղուին յամրան 100 տուն վրանարնակ քրդեր, ուր կան գեղեցկագոյն մարգագետիններ, առատ և յատակ աղբիւրներ, ճահճային վայրեր, զցնզգոյս ծաղկունք. մարգահասակ խոտի մէջ ոչխարաց հօտը անյայտացած է, հովուի սրինդի քաղցր ձայնը միայն կը լսուի. ինք արդէն մարգագետնոյն վերայ ընկողմանած անհոգ:

1. Վանքը, որոյ հիանալի շինութիւնը, հնութիւնները, արձանագրութիւնները, դրից գեղեցկութիւնը առանձին նկարագրութեան կարօտ է:

2. Ա. Սուքիասանց սրբավայրի վերան նաև պիտի գրեմ ըստ կարգին:

զուարթ՝ կը փէ՛: Այս լեռնէն կիջնան ջրեր
ի հիւսիս հոսելով Շեռեանի մնունդ կտան.
նցնպէս այլ ջրեր ի հարաւ արևելու խոնար-
հելով Արածանւոյ աջ կողմն գտնուած Ան-
դասիի! և Մանազկերտի մասերն իրարմէ բա-
ժանելով Արածանի կը թափի Քուսուկ (Կարուկ)

մնուամբ:

Բարազան լերինք.—Ալաշկերտի դաշտի ուղ-
ղակի յարեւմուտս բարձրացած են Բարազան
լերինք: որք Շեռեանայ զլխոյ² արեւմտեան
կողմն շրջապատած են և տարածուած Խալ-
եազի արեւերեան հարաւային բարձունքը մին-
չե Բրձօի յարեւմուտս գտնուած Կելին լեռն:
Այս լեռներն Բարազցի կոչուած քրդական
քաջ ցեղի ամարանոցներն են. որք Բազրեան-
դայ կը պատկանին, իսկ որոյ ձմեռանոցն կը
գտնուի հարաւային երեսին վերայ որ Մանազ-
կերտի և Անդափի կը պատկանի:

Պարզաշան լեռոն Խալեազի հիւսիսն: Կո-
ռաս կամ կոռէ Բարանան, որ քանի նշանա-
կութիւն ունի.—կը նշանակէ ըստ քրդաց ան-
մազ խոյ, բարձր լեռ, մակաղատեղի, գերեզման,
որ կայ յարեւելս Առւկաւետի, 3—3 $\frac{1}{2}$ ժամ՝ ի
հիւսիս Վաղարշակերտի. այս լեռան գագաթը
կայ մի ուխտատեղի ուր քրդեր կը յաճախեն,
զերեզման մի, որ տաս քայլ երկարութիւն ու-
նի. Շեշիտներ (նահատակ) անուն մի լեռ ևս
սորտ արեւելքը կայ:

Բօղ—թէփէ.—Երկու ժամ յարեւելս Կո-
ռասի, Զրարաշխի շղթային ուղղակի միջա-
վայրն կը գտնուի, Վաղարշակերտի ի հիւսիս
արեւելս 3 ժամ հեռուն բարձրացած է. դաշ-
տիս ամենէն լայն տեղւոյ ուղղութեան վերայ
կը գտնուի, գագաթը 4—5 արտավար տարա-
ծութեամբ տափարակ վայր ունի: Այս լեռն

1. Անդափ գտաւակ մէ՛ 140. ի չափ գիւղերով,
Արածանւոյ աջ և ձափ ափին վերայ, Դութեադ (եր-
կու թաղ) կառաւարչանիստ գիւղաբաղաքն է, Գարա-
քիլիսէէ 6—7 ժամ հարաւ. Արածանւոյ աջ ափին
վերայ է.

2. Շեռեանայ գլուխ կասուի Ալաշկերտի դաշտի
արեւմտեան ձայրն գտնուած մի մասն, որ գիւղա-
խմբապետութիւն է 17 քրդ. գիւղերավ զօրս Շեռեան
գետ այս դաշտին մէջ աջ բաժանած է:

Խիստ բարակ շղթայով մի կցուած է Յուլքքէ,
բինե՛ (նոխազանց վայր) հսկայ և անտառա-
պատ լերանս որ կը գտնուի Բօղ—թէփէի հիւ-
սիսն հանգէպ (յարեւմուտս) Կապուտայ, որոյ
2 թէկերը մինչեւ Երասիս տարածուած են:

Չամչէ.—Բօղ—թէփէի յարեւելս սակաւ ինչ
ի հարաւ արեւելս շեղուած Զրարաշխի շարքին
մէջ գտնուած լեռներուն ամենէն բարձրն է,
որ կայ Կաղզուանի և Գարափիլիսայի ուղղա-
կի միջավայրն, գագաթը ընդարձակ լեռնա-
դաշտ, որ մէծ տարածութիւն բռնած է,
ուր շատ անդամ վրանաբնակներ կը հաստատ-
ուին:

Որպէս ամեն լեռներ, այս լեռան ևս Զրա-
ռաւատ է. Եփրատի և Երասիսի առատ մնունդ
կտայ:

Այս լեռնադաշտի հիւսիսային արեւմտեան
ծայրն կայ Մամաքար սարն, ուստի քիչ ցած
հոչակաւոր Վարդէհօր վանք, որ Ազբուլան
լեռնէ իջնող Վիշապաձոր ասուած Զրի աջ
բարձանց վերայ շինուած է:

1822—1823 Շոււականներուն պարսկական
և օսմաննեան պատերազմներուն՝ մահտար-
ժամէ փախուստ զիմող պարսիկ խաններն իւր-
եանց վրաններն Չամչայի այս տափարակի վե-
րայ զետեղեցին, այս տեղ սարվագ քաջն Յո-
վասափ երկու խաններ սպանելով աղասեց եր-
կու զերեալ աղջկունք. սպանեց նաև կամա-
խաններու մոլութեանց յանձնուած մի աղջիկ²:

Աղրուլախ.—Չամչէ և Բօղ—թէփէ լեռնե-
րուն միջավայրն է. Ամատ զիւղէ 4—4 $\frac{1}{2}$

1. Սորտ և Կապուտայ միջն ջուր մի կանցնի-
րաւական փաստեր ունիմ ձեռս կարծելու թէ այս
տեղ է Արտագերից պատմական բերդը, որը Երաս-
իսի աջ ափից 3 ժամ բարձր կընկնի. որոյ արեւե-
լքէն կանցնի Կապուտայ ձորն իսկ արևմուտքն ի
հիւսիս կերկարին, քանի ձորեր կը միանան. Թէքէ—
Բինէի բերդի արեւմտեան ոտքն քերելով կանցնի.
Այս լեռն հսկայ, անմատչելի է, գագաթը ընդար-
ձակ տարածութիւն և հսկայ ծառներով պատած
անտառ ունի, նաև պաղ տաղ աղրիւներ:

2. Դաւոր գիւղի տեղագրութեան մէջ մննամասն
կը գրեմ: Այս միջոցին էր Բագրեանդայ ու Յովհան-
նէս վանուց վանահայր և առաջնոր անզուգական

ժամ՝ ի հիւսիս, ջրաբաշխի շղթային վերայ զիշկեցիկ զերք մունի, վճիտ, քաղցրահամ ողբերակունք, ի հիւսիս յարելը և ի հիւսիս արև մուտքը կարձակէ ջրեր, որք խորանդունդ ձորակներ կազմած են. տեսնողին զգացնել կտան թէ իրաւամբ այս ձորերից մին վիշապանոր անուն առած է, որ ըստժողովրդեան վարդէհօր ջուր կասուի:

Այս լեռը ի հարաւոյ կալոյի ձորին կը պարգևէ առատ ջուր, որ միանալով Զամշէ, իջած ջրին՝ առաջ կդնայ մինչև Շեռեան:

Նաև արեւմտեան հիւսիսէ կապուտաց Մատուռ մի ջուր կարձակէ, որ աջ կողմից կապուտայ ձորն կիջնայ, ուսափ նրասի կը թափի:

Թանգուրակ 1.—Զամշէ լեռնէ յարելը, բաւական հեռաւորութեան վերայ նաև այս շղթայի հիւսիսային երեսին վերայ, Գարաքիլսէի արեւելեան հիւսիսն 6 ժամ՝ հեռուն կայ, և մեծ ձորակներ կարձակէ ի հիւսիս որք Խնձէ և Փառնակուտ ջուր անուններով նրասի կը թափին:

Աստի սար.—Այնակ լեռներու արեւմտեան հիւսիսն, Զամշէի արեւելեան հարաւոյ Ալաշկերտի դաշտի վերայ կը հայի. որ սկզբնաւորութիւն կտայ, ըսափ, ի հոտ անուանած Ազտից մեծ ձորոյն, որ այժմ Աստայ կամ զէմի—չափոյի ջուր կասուի:

Այնակ.—Այս լեռներն Աստայի մօտէն կտիսին բարձրանալ և տարածուիլ այնպէս որ դաշտային մասն տակաւ առ տակաւ բռնելով՝ հարաւային կողմէ կեռակեառ, կօլասօր և Դաշլիչայ Պարսիկ գիւղերու մօտ. Մուրատի աջ եղբն կը նդհատի, որով Ալաշկերտի դաշտն Զիրաւայ դաշտից կը բաժանուի. Այնակ գագաթից իւր ուղղութիւնը յարելը երկար շտրունակելով՝ կը հասնի Գայլաւոյ ծովակն, որ Այնեկայ 2 կը պատկանի և այլ և այլ անուն-

Խաչատուր վարդապետն, որ ամբողջ Բագրեանդայ հայ ժողովրդեան ըռէսներն հաւաքեց, որոց հետ խորհուրդ կազմելով զինեցին ամրող ժողովուրդն, պատերազմեցան պարսից հետ:

4. Երկու Թանտուրակէ լեռներ կան մին Ալատազի մէջ ի հարաւ նպատայ, երկրորդն այս.

2. Որպէս Թանգուրակայ հովհաններու մէջ՝ նոյն-

ներ առած լեռներով շրջապատած է. աստի ևս այս շղթային այլ և այլ անուններով կը հասնի Մասիս, որ կայ ուղղակի յարեւել կոյս:

Այնակ լեռներու հիւսիսային կողմն կայ Գանատիլի զեռան (ոսկեայ կանթեղ կամ լեռ), իսկ շղթային վերայ Ղզըլ—Գիարել (կարմիր ուխտ) լեռն, որ շղթայի վերան է, որոյ գագաթը կը գտնուի մատուռ միտ մատուռի տակից երկու ջրազաց գարճնելու ջուր կը ըլլի ելն:

(Հարթակնելի).

Ա. ՀԱՅԿԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՅՄԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ
ՄԵՆԻԱԿԱՆ ՎԱՐՏԵՐՁՔ ՄԵՍԱՆ:



Ժամէյէլ, որ 16-րդ դարու Գրանտիական փիլիսոփայ է, բարոյական կրթութեանը տալիս է առաջին տեղը: Կա մեղաղուումէ իր ժամանակակից մանկավարժներին

իմաստակութեան (պէտանտիզմ)

մէջ: Այդ միջոցին իմաստակութիւնն արտայայտուումէր երկու տեսակ. աշխատումէին սովորցնել ոյժ տալ նուրբ և փքուն մտածողութեան և յիշողութիւնը ծանրաբեռնումէին զանազան բաներով, անուշադիր թողներով զիտակցական խելամտութիւնը: Մօնտէյնը որոշումէ, թէ ինչպէս եր կամենում բարեփոխել կրթութիւնը և ինչպէս եր մտադիր փոխել այն կրթական եղանակը (մետօդ), որ արգելք եր գառնում խորհեցողութեան և դատողութեան, զարգացնում էր միայն յիշողութիւնը: Կա ասումէ, որ երեխային պէտք է պատուաստել այն ընդհա-

պէս Սինեկայ լեռնադաշտի և հովհաններու. Աէջ 25 գիւղ եղափ ժողովուրդ կայ, նոյնշափ մի ևս քո՞րդ թուրք ժողովուրդ: